

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 40/5

21 օգոստոսի 2013 թ.

Քննարկվեց <Թելման-94> ՍՊԸ դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի 12.07.2013 թ-ի թիվ 227265 որոշման դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 2013 թ-ի մայիս ամսվա ՀԴՄ-ով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարների վերաբերյալ տեղեկությունները հարկային տեսչություն ուշ ներկայացվելու համար ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 12.07.2013 թ-ի թիվ 227265 որոշմամբ <Թելման-94> ՍՊԸ տնօրենի նկատմամբ կիրառվել է <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասով սահմանված պատասխանատվության միջոցը՝ գումարով 15.000 դրամ:

<Թելման-94> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

2013 թ-ի մայիս ամսվա ՀԴՄ-ով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարների վերաբերյալ տեղեկությունները ընկերության կողմից ներկայացվել է 2013 թ-ի հունիսի 7-ին, որը հարկային օրացույցով համարվում է հաշվետվության ներկայացման վերջնաժամկետ: Սակայն, ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 12.07.2013 թ-ի թիվ 227265 որոշմամբ կիրառվել է <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասով սահմանված պատասխանատվության միջոցը, որը չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 12.07.2013 թ-ի թիվ 227265 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով <Թելման-94> ՍՊԸ և ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ ներկայացուցիչների բերած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն գործի քննարկման ընթացքում պարզվեց, որ վարչական վարույթի իրականացման ընթացքում խախտվել են <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի պահանջները: Մասնավորապես, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության, ինչպես նաև վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 12.07.2013 թ-ի թիվ 227265 որոշման կազմման ընթացքում խախտվել են <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 255-րդ, 279-րդ և 281-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

Բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 12.07.2013 թ-ի թիվ 227265 որոշումը, իսկ գործը կարճել:

Հանձնաժողովի նախագահ

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

